# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**19 հունիսի 2020 թվականի N 147 -Ա**

### «ԱՇՈՏԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքի 111-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» ենթակետով և հիմք ընդունելով «Աշոտավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Է.Հովհաննիսյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1.2020թ. հունիսի 22-ից լուծել «Աշոտավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էդգար Հովհաննիսյանի հետ 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված N 15 աշխատանքային պայմանագիրը:

2.Լիանա Պողոսյանին 2020թ. հունիսի 22-ից նշանակել «Աշոտավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3.Կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Նարինե Աթայան | Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսա-տնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ), |
| Ինանա Բալայան | մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ |
| Էդգար Հովհաննիսյան | «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն, հանձնող |
| Լիանա Պողոսյան | «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար, ընդունող: |

4. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

19.06.2020

X

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN HUNAN 4005640117

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

**Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2020թ. հունիսի 19
ք. Կապան